

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1953 ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ Թ. 11-12

ՊԱՏՄԱԿԱՆ Էջ

ՖՈԿԼՈՐԱՆ Զ. ԱՆԴՐԵԱՍ (Թրգմ.) - Ապետիք
Կոմսի զարմանալի կեանքը (չար.) . . . 225

ՀԱՅՈՒՆԻ Զ. ՎԱՐԴԱՆ. - Նորակերտ հայ
Հոսիկներ (չար.) . . . 228

ՄԻՍԱԿԵԱՆ ԲԺ. ՊԵՏՐՈՍ. - Լուսի փաստաթուղթ
Ա. - Մարդը (չար.) . . . 252

ԿՐՕՆԱԿԱՆ

ՏԵՐ ՆԵՐՍԵՍԵԱՆ Զ. ՆԵՐՍԵՍ. - Մեր Նախ-
նեաց Հաւատքը - Ս. Ներսէս Շնորհալի
և Պետրոս առաքել . . . 233

ԳՐԱԿԱՆ

ՀԱՆԱՇԵԱՆ Զ. ՄԵՍՐՈՊ. - Եղիա Տէմիր-
ճիւղաշէն (չար.) . . . 244

ՍՐԱՊԵԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ. - Դրաֆիւմէի գերեզ-
մանոցը . . . 261

ՀԱՆԱՇԵԱՆ Զ. ՄԵՍՐՈՊ. - Մայրը . . . 262

ՀԱՆԱՇԵԱՆ Զ. ՄԵՍՐՈՊ. - Անդորրանք . . . 264

ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ Զ. ՎԱՀԱՆ. - Աղօթք սրբ-
անքու համար . . . 265

ԳՐԱԹՕՍԱԿԱՆ

ԽՄԲ. - Յարալէզներու հաշուութիւնը (Վահէ
Վահանի) . . . 266

ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ Զ. ԵՓՐԵՄ. - Բանադող վի-
պասան մը . . . 266

ՔԻՒՐՏԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ. - Յիշատակարանք
ձեռագրայ Գարեգին Կթղ. Յովսէփեան-
ցի (չար.) . . . 270

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Ազգային այցելուներ ի Ս. Ղազար (չար.) . . . 272

SOMMAIRE

1953 Novembre-Décembre N. 11-12

HISTOIRE PAGE

Fogolyan P. André. - La vie étonnante du
Comte Abédik (trad. de l'hongrois)
(suite) . . . 225

Hatsouni P. Vardan. - Histoire des nouveaux
Lusignans (suite) . . . 228

Missakian Dr. B. - Louis Pasteur (1822-1895)
L'homme (suite) . . . 252

RELIGION

Der Nersessian P. N. - La foi de nos ancêtres.
- S. Nerses le Gracieux et l'Apôtre
S. Pierre . . . 233

LITTERATURE

Djanachian P. Mesrob. - Elie Démirdjibach-
ian (suite) . . . 244

Serabian Aramaïs. - Le cimetière (poésie). 261

Djanachian P. Mesrob. - La mère (poésie) . 262

» » - Repos (poésie) . 264

Hovhannessian P. Vahan. - Prière pour les
cœurs (poésie) . . . 265

RECENSIONS

Réd. - «Mémoires patriotiques» de Vahé
Vahian . . . 266

Der Ghazarian P. Ephrem. - Le romancier
plagiaire . . . 266

Kurdian Haroutioun. - «Les colophons des
manuscripts» du Patr. Karékine Hovsé-
piantz (suite) . . . 270

ECHO ARMENIEN

* * *. - Visiteurs arméniens à S. Lazare
(suite) . . . 272

5949-4-3.

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1953

ՀԺԱ. ՏԱՐԻ



ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԹԻՒ 11-12

ԱՊԵՏԻՔ ԿՈՄԱՐ

ԶԱՐԾԱՆԱԼԻ ԿԵԱՆՔԸ

(Շար. տե՛ս Բազմ. 1953. Թ. 6-7, էջ 120)

Ճամբորդութեան հետաքրքրական դէպ-
քերէն մէկն ալ նշանակուած է: Թէեւ դըժ-
ուար է Ապետիքի կեանքին այս շրջանը վե-
րակազմել եւ այս ճամբորդութեան ման-
րամասնութիւնները դռնէլ զանազան աղ-
բիւրներու մէջ, սակայն Նախորդին Ֆի-
լամոնտոյի 1695-ի մէկ գրութիւնը մեզի
քանի մը տեղեկութիւններ կու տայ՝ Փիս-
քոփոսի մասին խօսած ատեն: Մանրա-
մասնութիւններէն այնքան միայն կրնանք
տեղեկանալ՝ թէ տակաւին Ռուսական հո-
ղին վրայ եղած ժամանակին կը հանդի-
պին Եաղուպ անունով արեւելցի հրեայի
մը, զոր թէ՛ ինքը Ապետիք եւ թէ՛ Փիսքո-
փոս շատ մտաջի ու համակրելի մարդ կը
գտնեն: Այս է պատճառն ալ որ զայն հե-
տեւին կ'առնեն. մանաւանդ որ Եաղուպի
ալ փափաքն էր եղած Եւրոպա անցնիլ ու
մկրտուիլ: Սա Չմիւռնիացի էր, եւ յետոյ
Ռուսաստան փոխադրուած: Զարգացած
մարդ մըն էր եւ ուսումները կատարած
Երուսաղէմի Ռաբունապետական դպրոցին
մէջ: Ճամբորդութեան ժամանակ իր
կեանքի արկածները պատմելով կը դըժ-
ղեցնէր ուղեւորները: Այսպէս, օրինակի
համար, պատմած էր իր դպրոցական ըն-
կերներէն մէկուն մասին, թէ ո՛րքան հան-
ճարեղ ու համբաւուր մարդ մըն էր, որ
մինչեւ իսկ քաղաքին թուրք կառավարիչը
անոր լուրը եւ հրաշագործի համբաւը առ-
նելով՝ իր առջեւ կանչել տուած էր, ու
հանդիսաւոր կերպով բազմաթիւ վկանե-
րու ներկայութեան մեռել մը բերելով
հրամայած էր որ յարութիւն տայ անոր,
խոստանալով որ եթէ կարենայ կատարել
այդ հրաշքը՝ ինքն ալ հրեայ կը դառնայ:
Մարդը փաշային այս արտառոց փափա-
քին այնպիսի խելացի պատասխան մը կու
տայ, որ փաշան հրաժարելով կ'ըմբռնէ
փափաքին անմիտ ու անտեղի ըլլալը, եւ
այնքան կը հաւնի մարդուն՝ որ անկէ վերջ
ստէպ ըովը կը կանչէ եւ յետոյ իր պալա-
տին դռնապան «Քափուճի պաշը» կը կար-
գէ զայն: Այսպիսի պատմութիւններով կը

զուարճանային Ապետիք եւ իր ուղեկիցները ճամբորդութեան անվերջ օրերուն:

Քանի մը օրէն Յարիշին, Սարաթով, ապա Սամարա հասան: Մինչ այս՝ ձմեռը կը խստանար ու սաստիկ ցուրտը շատ նեղութիւն կը պատճառէր ճամբորդներուն, որովհետեւ ժամանակի անկատար միջոցները անբաւարար էին պաշտպանելու զիրենք այդ սաստիկ ցուրտէն: Մանաւանդ հարաւայինները շատ կը կրէին: Ուղեւորութեան Ռուս անդամները համեմատութեամբ աւելի կը դիմանային ցուրտին, թէեւ իրենք ալ շատ չէին վարժած ձմեռնային այսպիսի երկարատեւ ճամբորդութիւններու: Ապետիք կը գրէ ինք իր մասին՝ թէ դիւրաւ կը տանէր ցուրտին, բայց իր դեսպանակից Փիւքոփոսը քիչ կը մնար կեանքը վրայ տար: Ստէպ կը պատահէր որ ամայի տեղւոյն պատճառով ստիպուէին բացօթեայ գիշերել՝ մուշտակներու, մորթերու ու վերմակներու մէջ փաթթուած: Զուր գտնելու համար հարկադրուած էին կացինով խորտակել սառը, որովհետեւ ամէն կողմ սառ կապած էր ջրհորներու եւ աղբիւրներու վրայ: Իսկ այդ անծայր ու միապաղաղ դաշտագետիններու վրայ թէեւ ճամբորդութիւնը հեշտալի աղբեցութիւն մը ունէր սկիզբը, սակայն երթալով աւելի ճնշիչ ու տաղտկալի կը դառնար: Կարճ ժամանակի մը համար աղուոր կրնայ ըլլալ օրն ի բուն արշաւելը, բայց անվերջ միապաղաղութիւնը անտանելի կը դառնար: Ռուսական կարճահասակ ձիեր կը քաշէին թեթեւ բալխիրները. անասունները զարմանալիօրէն կը դիմանային յոգնութեան. անոնց վզէն կախուած արծաթեայ զանգակիկներու ներդաշնակ համերգը կ'օրօրէր երազանքի առատ ժամանակ ունեցող դեսպանները, որոնք մերթ Պարսկաստան թողուած վարդերու բուրաստաններու մէջ, մերթ աներեւոյթ եղած ոսկեայ գմբեթներով ոռոսական աւաններու մէջ կը փոխադրուէին, մերթ

երեւակայութիւնը զիրենք առաջ կը տանէր Լէոփոլտ կայսեր չքնաղ արքունիքը, ուր, ո'վ գիտէ, ինչե՛ր կը սպասէին իրենց...: Հաստ մուշտակներու մէջ փաթթուած ուղեւորներու երազանքները մերթ ընդ մերթ կ'ընդհատուէին իրենց ընկերացող Խաղախներու հրացանաձգութիւններէն, որոնք ստէպ զրազանքի կամ սովորութեան համար կը կատարուէին, բայց ոչ նուազ անգամներ՝ դայլերու վոհմակները հեռու բռնելու համար:

Գաղանի մէջ քանի մը օր դադար առին Ապետիք ու Փիւքոփոս եւ իրենց մարդիկը. ու ոռոսական սովորութեան համաձայն՝ ճոխ կերպով հիւրասիրուեցան: Քիչ մը յոգնութիւն առնելէ վերջ՝ շարունակեցին ճամբան այս անգամ ճախճախուտ, անբնակ ու վայրի տեղերէ անցնելով: Նշանակութեան արժանի դադար մը տեղի ունեցաւ միայն Նիժնի-Նովկորոտի մէջ, որ նոյն ժամանակն ալ բաւական առեւտուրի քաղաք մըն էր. սակայն աւելի ուշ վաճառականութեան կարեւոր կեդրոն դարձաւ: Վլատիմիր քաղաքէն անցնելէ վերջ՝ քիչ ժամանակէն հասան Մոսկուա:

Մոսկուա այդ չրջանին արդէն մեծ ու բազմամարդ քաղաք մըն էր: Ան դմայելի տեսարան մը կ'ընծայէր աչքին իր հարիւրաւոր զանգակատուններով, պարսպապատ Քրեմլին ներքնաբերով, մայր եկեղեցիով որ եօթը ոսկեղէն գմբեթներ ունէր, Յարի պալատով: Քաղաքին մէջ փայտաշէն տունները շատ էին, մանաւանդ արուարձաններու մէջ, ուսկից մեր դեսպանները քաղաք կը մտնէին: Անթիւ ջրանցքներ ու առուակներ կը կտրէին քաղաքը, որոնց վրայէն փոքրիկ կամուրջներ կ'անցնէին: Ժամանումէն քիչ վերջ, ցարական պաշտօնեաները բիւզանդական աւանդութեան համաձայն՝ շուրջ ընդունելութիւն մը ըրին Պարսիկ Դեսպան - Եւրոպացի Դիւանագէտներուն: Մոսկուայի մէջ հանգստաւէտ օթեւան մը ունեցան.

Հոս ամէն դիւրութիւն կ'ընծայուէր Եւրոպացի դեսպաններուն համար: Ծիշտ այս նպատակով յատուկ պալատ մը կառուցուած էր: Փիւքոփոս եւ Ապետիք քաղաքին հրաշալիքները այցելելէ վերջ՝ ամէնէն առաջ Փրանկիսկոս Մարթէլ Պապական Նուիրակէն հիւրընկալուեցան, որ մեծ հետաքրքրութեամբ մտիկ կ'ընէր ասոնց բերած լուրերուն:

Նոյն ժամանակ Պետրոս Մեծի նախորդը, Թէոփոր Գ. (1656-82) կը բազմէր ցարական գահին վրայ. որուն յատկանշին էր արեւմտեան քաղաքակրթութեան հանդէպ ունեցած հարումը: Յարը ընդհանրապէս միշտ կ'ընդունէր Մոսկուա հասնող օտար դեսպանները, ինչպէս կը տեսնուէր ժամանակի պղինձէ փորագրութիւններու մէջ ալ (incision). Քրեմլինի պալատին մէջ ստէպ ընդունուած էին Գերմանիոյ կայսեր եւ Հունգարիոյ թագաւորին դեսպաններն ալ:

Յարը այնքան կը յարգէր իր հիւրերը, որ սովորութիւն դարձուցած էր իր ոսկեղէն կառքը արքունիքէն դուրս հիւրերը առնել բերելու համար: Պալատական բարձրաստիճան իշխան մը ու բազմաթիւ անդամներէ կազմուած ձիաւոր շքախումբ մը՝ կ'ընկերէր դեսպաններուն իրենց բընակարանէն մինչեւ արքունիք: Հոս Յարը դահին վրայ բազմած՝ նախ պաշտօնական ու հանդիսաւոր ունկնդրութիւն կ'ընծայէր դեսպաններուն, որոնք գահին առջեւ դաշու ծնրադրութեամբ կ'ողջունէին վեհապետը: Մինչ Մոսկուայի զանգակները կը ղողանջէին ու գահին շուրջ շարուած էին իշխանները, մէկը միւսէն աւելի պերճ հագուստներ հագած, ընկերացող պալատական իշխանը կը ծանօթացնէր դեսպաններուն: Ապա ասոնք քանի մը խօսքով կ'ողջունէին Յարը իրենց յարգութիւնը մատուցանելով: Ասոր ճոխ խնջոյք մը կը յատուցանելով: Ասոր ճոխ խնջոյք մը կը յատուցանէր ծաղի ժամանակ՝ դեսպանները ջորդէր: Ծաղի ժամանակ՝ դեսպանները Յարին մօտերը փոքրիկ սեղաններու շուրջ

տեղ կը դրաւէին: Բնական է, ոռոսական սովորութեան համեմատ, առատ եւ ընտիր գինի ալ կը բերուէր ու Յարը բաժակ կը բարձրացնէր օտար վեհապետներու կենդանութեան:

Յաւալի է որ Ապետիքի Մոսկուա անցուցած չրջանին մանրամասնութիւնները չենք կրնար գտնել. ուստի ստիպուած ենք ենթադրութիւններով զոհանալ Յարի ունկնդրութեան մասին ալ: Այնքան միայն գիտենք՝ թէ Մոսկուայէն ալ շուտով մեկնեցան, դէպի Վիեննա ուղղելով իրենց ճամբուն ընթացքը: Ծամբուն մնացած մասը նուազ վտանգաւոր էր. իրենց սընունդն ալ չոր ու պահածու կերակրեղէններ չէին այլեւս, որովհետեւ աւելի բազմամարդ ու քաղաքակրթ երկիրներէ կ'անցնէին, ուր առատօրէն կրնային գտնել միս, ձուկ, հաց ու ցուրտի ժամանակ տաքցնող լաւ օդի: Մոթայսք, Պորտուգալ ու Սմոլենսքէն վերջ՝ շուտով ոտք կոխեցին Լեհական սահմաններու վրայ:

Ասկէ վերջ այլեւս ձիերը մերթ ընդ մերթ փոխելով սրարշաւ կ'երթային դէպի Վիեննա: Ծամբան Լեհ մեծամեծներու ճոխ սեղաններուն հիւրեր կ'ըլլային, մեծ հետաքրքրութիւն չարժեղով իրենց ճամբորդական արկածներով: Երկիրը երթալով աւելի քաղաքակրթ կը դառնար ու ամայի եւ վայրի դաշտագետիններու փոխան՝ յանկուցիչ կերպով կը բացուէր Միջին Եւրոպան Ապետիքի եւ Փիւքոփոսի աչքերուն առջեւ: Երկար ժամանակ հիւր կեցան Սասի ծիրանաւորին քով, Հռոմի կայսեր ապագայ դեսպան՝ Հեսսերի Կոմսին քով, եւ յետոյ Շաֆկոթէ Կոմսին քով: Ուր ալ հասնէին, քաղաքները մեծ հանդէսով ու խանդավառութեամբ կ'ընդունէին զիրենք իր հակաթուրք միութեան ռազմիրաները: Վերջ կը գտնեն խիղախ լեռները եւ ուղին կ'ընթանայ մեղմ բլուրներու եւ մըրջակուած դաշտերու մէջէն: Կոկիկ յարկեր, գեղեցիկ դղեակներ ու պարզունակ



դեղեցիկ եկեղեցիներ կ'անցնին իրենց առջեւէն. կիրթ, յարգալիր ու բարի մարդիկ կը բարեւեն ամէն կողմէն երկու աղնուական ճամբորդներու կողքը: Ապետիքի ու շաղթութենէն չեն վրիպիր այլաձեւ տարազները, զոր ինքը չէր տեսած ո՛չ Իտալիա եւ ոչ իր հայրենի երկրին մէջ, ու շատ մը մանրամասնութիւններ՝ զոր օտարական ճամբորդ մը միայն կրնայ ան-

դրադառնալ: Երբ այլեւս կը սկսէր վարժիլ մաքուր, մարդամօտի ու զանգակաւոր աւաններու եւ դիւղերու, ահա՛ աչքին առջեւ կը բարձրանար Վիեննայի Սուրբ Ստեփանոս եկեղեցւոյ վեհաշուք զանգակատունը:

Թրգմ. Հ. Ա. ՖՈԿՈԼԵԱՆ

(Շարունակելի)

ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՅ ԼՈՒՍԻՆԵԱՆՆԵՐ

(Շար. Բազմ. 1953. Թիւ 8-10, էջ 177)

ԳԼՈՒԽ Դ.

Լեւոն Վենետիկի մէջ. Հայոց Կարդիմալ մը կը խնդրէ. Միսիւրաբեաններու հետ:

13. — Լեւոն Վենետիկի մէջ աւատրիական իշխանութեան ներքեւ գտած հանդիսութենէն համարձակութիւն առած, Յուլիս 30-ին կ'իմացնէ Արքայօր. « Ես գրեցի երէկ Մաքսիմիլիանոս Արքեպիսկոպին (եղբայր կայսեր եւ կուսակալ Վենետիկոյ), խնդրելով իր պաշտպանութիւնը, այսինքն աւատառու (vassal) Աւրատրիոյ» ընել զինքը իբր աղնուական, եւ ոչ սոսկ հպատակ, որ յատուկ էր հասարակ քաղաքացիներուն: Ասոր հետ սկսած էր նաեւ քաղաքական շարժումներ նոյն իշխանութեան եւ Հռոմի հետ եւ Օգոստոս 4-ին կը դառնայ տեղեկագրել Հիւրմիւղեանին. « Եթէ Հռոմի պատասխանը նոյնչափ նպաստաւոր լինի՝ որքան Վենետիկինը, Ես այն ժամանակ պիտի ըսեմ. Կեցե՛ցէ՛ Հայաստան: Տէր Արքեպիսկոպը յետոյ ինծի զրկեց իր թիկնապահը, եւ առանց աւելի ըսելու Ձեզի՝ Դուք անկասկած գիտէք ամէն բան»: Կը յարէ՝ թէ մինչեւ այդ օր բարեկամի մը անցագրով կը մնար.

« զայն իրեն դարձուցի, կ'ըսէ, երէկ իսկ՝ որպէսզի հոս գայ»: Կը բնակէր քաղաքին Սքիաւոնեան քարափին վրայ (թիւ 4179), որ կը նայէր լճակի գեղեցկութեան:

Արքեպիսկոպին հետաքրքրուելէն իր հաւած հետեւանքը չափազանց լաւատես էր. ընդհակառակն Գերալ. Հիւրմիւղեան կը հաղորդէ իր եղբոր. « Աստ խնդրեաց նա ի պետութենէ տեղւոյս զպաշտպանութիւն նորա եւ գրել ընդ հպատակս Աւատրիոյ. եւ գրեցաւ խնդրին ի Վիեննա, եւ ասացաւ նմա կալ աներկիւղ եւ անկասկած ի ռուսական հնարից, զի պետութիւնն ոչ անսայցէ բանից նորա, որպէս ի Հռոմ»: Իսկ կարեւորագոյն խնդրին համար կ'ըսէ. « Բայց եւ նպաստել դատի նորա եւ իրաւանց՝ ոչ կարէ եւ ոչ կամի» (9 Օգ.): Կ'իմացնէ դարձեալ՝ թէ նա քաջալերուած Աւատրիոյ ապահովիչ պատասխանէն, կը խորհէր երթալ հաստատուիլ Միլանի մէջ (20 Օգոստոս):

Արքայօրը կը յարէ՝ թէ նա ունէր եւ ցոյց կու տար Վենետիկոյ մէջ « Թուղթ իմն՝ որպէս գրեալ ի Հաղարապետութենէդ (Հռոմայ) առ Քիչնէֆ հիւպատ Ռուսաց այդր, ցուցանելով զի Կորիկոս իցէ

արդարեւ Թագաժառանգ Ազգին Հայոց, եւ զլացեալ լինի թոշակն խոստացեալ նմա յապրուստ» (9 Օգոստ.): Անկարելի չէ նման նամակ մը, թէեւ Հիւրմիւղեան չի ուղեր « Գիւրմիւղեան լինել բանից նորա» մինչեւ ստուգէր եղբորմէն, որ կը գոհացնէ զինքը:

14. — Լուսինեանը կ'ունենայ ուրիշ տարօրինակ դադափար մըն ալ: Յուլիսի 31-ին նամակ մը կը գրէ ուղղակի առ Պիոս Թ. Պապը, ուր նախ շնորհակալ կ'ըլլայ իրեն շնորհուած թաթախեալ հաղորդութեան արտօնութեան համար: Մինչեւ հոս լաւ. բայց ի՞նչ կ'ուզէ որ ըսէ յետոյ. « Այսօր Հայ Ազգը կը միանայ Ինձ հետ թաթախեալու Ձեր Սրբութենէն՝ շնորհել իրեն կարգինալ մը՝ ընտրուած երեք թեկնածուներու մէջէն, զոր Ես պիտի առաջարկեմ, այս գերագնացապէս քրիստոնեայ Ազգին Գլխու հանգամանքով»: Կը յիշէ՝ թէ միացեալ յոյները, մեզմէ նուազագոյն, կարդինալ ունին: « Հայ ազգը, կ'ըսէ, յանձն կ'առնէ բոլոր ծախսերը». եւ անոր բնակավայրը պիտի ըլլայ Հռոմ, « Կարդինալներու ժողովին մասնակցելու համար»: Ապա կը յաւելու. « Իմ Ազգիս, որու գործիքն եմ Ես Ձեր Սրբութեան մօտ, յայտարարելու համար՝ թէ հաւատարմութեամբ կատարած եմ իր բաղձանքը, այս նամակը առաջիկայ Սեպտեմբեր ամսուն պիտի հրատարակեմ բոլոր բեր ամսուն պիտի հրատարակեմ բոլոր լրագիրներուն մէջ, որպէսզի կարենայ հասնիլ մինչեւ անոնց գաւառները. որովհետեւ այդ շրջանին կը խորհիմ Կոստանդնուպոլիս գտնուիլ» եւն.:

Երեք արտառողութիւն կար այս նամակին մէջ. իր անձին տուած վեհապետական հանգամանքը, մինչ տակաւին թական հանգամանք մ'է լոկ. առաջարկութեան դադաճանք մ'է լոկ. առաջարկութեան ի գործ դրած ստիպումը՝ հրատարակութեան խոստումով: Բոլորովին ինքնազը-

լուխ առած էր այդ քայլը, եւ նամակին պատճէնն ալ յղած էր Հիւրմիւղեան Արքայօր, որ այսպէս կը գրէ իր եղբոր. « Ընդ որ ոչ սակաւ դժկամակեցայ. զի որպէս գլուխ եւ երեսփոխան Ազգին՝ երաշխաւորէ ի հատուցումն ծախուց ծիրանաւորին ազգայնոյ, զոր խնդրէ. եւ չգիտեմ թէ ուստի՛ ապա հատուցէ, բայց ի մեր վերայ արկանել: Յուսամ զի խնդիր նորա ոչ լիցի լսելի»: Այդ մասին հարցում եղած էր Ծաւալոցէն առ Գերալ. Եղբարդ Արքեպիսկոպոս, եւ « հարազատութիւնդ բարեօք պատասխանեալ էր», կ'ըսէ եղբայրը (20 Օգոստ.): Բայց այդ խնդիրը պիտի շարունակուէր տակաւին:

15. — Լեւոնի հաղորդակցութիւնը Միսիւրաբեաններու հետ սերտ չէր, եւ ամէն ինչ իր ուղեղով կը գործէր: Բնական է, անոնք չէին կրնար անշուշտ հաւանիլ ու գործակցիլ իր բոլոր բաղձանքներուն, զոր տարբեր զոյններով կը տեսնէին իրենք: Վենետիկոյ մէջ նստած, զալէն ի վեր « մի անգամ երեւեալ նորա առ մեզ ի վանս, եւ ապա աներեւոյթ եղեւ, կ'ըսէ Արքայօր, մինչ չգիտել մեզ եւ զտեղին՝ զոր ծածկէր եւ ի մէջն» (20 Օգոստ.): Եւ կը խորհրդածէ. « Այր խարդախ թուի եւ նենգաւոր, յանդուգն եւ ձեռներէց, կամ թէ արդարացուցանել զնա կամիցիմք՝ փաքած» (27 Օգոստ.): Մարդիկ սովոր են դատել միշտ արտաքին երեւոյթէն, չկարենալով տեսնել ներքինը. եւ Լեւոնի արտաքինը անշուշտ այնչափ նպաստաւոր չէր իրեն: Հիւրմիւղեանը կը գրէ դարձեալ. « Ի Կորիկոսէ կատկածիմ զամենայն, զի ոչ վարկ բարի առի զնմանէ » (4 Սեպտ.): Յայտնի է թէ անոր գործելու եղանակը դիտողներ կային քաղաքին մէջ, նոյնիսկ օտարներ (ինչպէս Փարմայի Դիսուհի պարագային. հմ. 16), եւ կը տեղեկացընէին Միսիւրաբեաններու խոհեմ եւ ազգա-